

**ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ
ՍՈՒՐԲԵՐԸ ՊԻՏԻ ԺԱՌԱՆԳԵՆ ԵՐԿԻՐԸ**

1. Աստուծոյ Արքայութիւնը
2. Զեմ Ուզեր Որ Անգէտ Ըլլաք
Ննջեցեալներու մասին
3. Բարի Աստուծոյ Ստեղծագործու-
թեան մէջ, Զարը Ուրկէ՞ եկաւ

THE KINGDOM OF GOD

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2009**

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ

Պօղոս ժողովարան մտնելով՝ երեք ամիս համարձակօրէն *Հասուծոյ*
Արքայութեան մասին կը խօսէր անոնց և կը փորձէր համոզել: Յիսուս
Քրիստոս և Իր հաւատարիմ առաքեալները, քարոզեցին *Վասուծոյ*
Արքայութիւնը՝ փոխանակ *Իսորայէլի*՝ թագաւորութեան:

Յիսուս պատուիրեց աշակերտներուն ըսելով. «Երբ կ'երթաք, քարոզեցէ՛ք
թէ *երկինքի Արքայութիւնը* մօտեցած է»--Մատթ. Ժ.1-10, Ղուկ. Թ.1-2:

Հազարաւոր տարիներ աշխարհի բոլոր կրօնաւորներու աստուածները
պատերազմաւէր և մարդաբնաջնջումի աստուածներ էին: Զաներորդ դարու
համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմները եւս, իլեցին մօտ 70
միլիոն մարդկային կեանքեր և քաղաքակիրթ քաղաքներու ճարտարապետու-
թիւնը բնաջնջեցին: Վերջին յիսուն տարիներու Երոպայի խաղաղութեան և
իրարհասկացողութեան հերոսներն են՝ Գերմանիոյ և Ֆրանսայի վարչա-
պետները՝ Քոնրատ Ատէնաուր և Ճեներալ Տը-Կոլ: Այս երկու երկիրները,
դարեր ջարունակ եղած են թշնամիներն ու Երոպան աւերող ազգերը: Այս
երկու վարչապետները երբ ուրացան ատելութիւնն ու սիրեցին բարեկա-
մութիւնը, Երոպան գտաւ խաղաղութիւն և բարգաւաճում:

Տրամաբանող մը գիտէ, թէ *գեղեցիկը, լոյսը, և բարին*, միայն
գաղափարներ և մտածումներ չեն, այլ նաեւ շօշափելի և տեսանելի
իրականութիւններ, եղելութիւններ և ճշմարտութիւններ: Սակայն կարգ մը
տիտղոսակիրներ, այսօր, անուանի համալսարաններու մէջ կ'ուսուցանեն
իրենց աշակերտներուն թէ, վերոյիջեալ իրողութիւնները պարզ հոգեկան և
բնագոյային բարախումներ են մտացածին երեւակայութեան:

Սակայն այս մեծանուն տիտղոսաւորներու հակադիր կը կանգնի Յիսուս
և կը ջանայ ճանչցնել ու հաւատացնել Իրեն հետեւողներուն, որ մտացածին
ներկայացուած բարախումները երեւակայութիւններ չեն, այլ՝ *Արթնալորտին*
մէջ գործող ոգեղէն ուժերու ն՝ Բարիին և չարին Պայքարամարտը:

Յիսուսի մատնանշած Սատանան՝ երեւակայութիւն մը չէ, մտային
ազդեցութիւն՝ մը չէ, լուսնոտութիւն մը՝ չէ, այլ *անձ նաւորութիւն* է մը և
իսկութիւն մըն է որ կը գործէ Բարիին դէմ և կ'ուզէ իրեն ենթարկել համայն
մարդկութիւնը: Յիսուս այս մասին շատ իմաստալից առակ մը պատմած է.
կարդանք միասին թէ ի՞նչ կ'ըսէ Ան.

«Երկինքի արքայութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ բարի
սերմ ցանեց: Եւ երբ մարդիկ բունի մէջ էին՝ անոր թշնամին եկաւ, ցանուած
ցորենին վրայ որով ցանեց ու գնաց: Եւ երբ ցորենը բուսաւ և պտուղ տուաւ՝
ապա երեցաւ և այն որովը:

Մտաները ըսին Տիրոջ. «Կ'ուզե՞ս որ երթանք ու քաղենք հանենք

գայն (որումը)» եւ տէրը ըսաւ անոնց. «Ո՛հ, գուցէ որումը քաղելու ատեն, ցորենն ալ հետը արմատախիլ ընէ՛ք: *Զգեցէ՛ք որ երկուքն ալ միասին ամին մինչեւ հունձ. ք. և հունձ. քի ատեն ես հնձուորներուն կ'ըսեմ՝ քաղեցէ՛ք նախ այդ որումը և խուրձերով կապեցէ՛ք **այրելու համար**, իսկ ցորենը ժողվեցէ՛ք իմ ջտեմարաններուս մէջ»--Մատթ. ԺԳ. 24-30: Մատանան ջանաց, նոյնիսկ իրեն ենթարկել Մարդեղացեալ Որդին Աստուծոյն, վերջին փորձութեան հրաւերով:*

Յիսուս այնքան վստահ էր, Մատանային վրայ Իր ունենալիք յաղթութեան, որ ըսաւ աջակերտներուն. «*Նախ խնայեցէ՛ք որ Աստուծոյ Այբալուծիքն նր գայ և աշխատեցէ՛ք Իր կամքը կատարել, և Աստուած այդ բոլորը աւելիով պիտի տայ ձեզի»* --Մատթ. 2. 33: Որովհետեւ ձեր երկնաւոր Հայրը գիտէ արդէն թէ այդ բոլորին պէտք ունի՞ք դուք:

***Ինչո՞ւ կը հաւատամ և աղօթքներուս մէջ կը խնդրեմ
որ Աստուծոյ Թագաւորութիւնը ջուտով գայ:***

Որովհետեւ ինքզինքս կը միացնեմ աշխարհի Զրիստոնեայ հաւատացեալներուն, որոնք եւս կը հաւատան ու կ'աղօթեն իրենց մանկութենէն ի վեր, ըսելով.

«Հայր մեր երկնաւոր,
սրբաբանուի՛ անունդ.
Թող գայ Արքայութիւնդ,
Թող կատարուի Զու կամքդ,
ինչպէս որ երկինքի մէջ՝
այնպէս ալ երկրի վրայ»:

Միլիոնաւոր Զրիստոնեաներ կ'աղօթեն սոյն աղօթքը ամէն օր, սակայն դժբախտաբար այնպէս կը կարծեն, թէ *երբ մեռնին, իրեն՛ք երկինք պիտի երթան*: Մինչդեռ, Տէրունական աղօթքին մէջ չենք խնդրեր որ մե՛նք երկինք երթանք, այլ կը խնդրենք, որ--Աստուծո՛յ Թագաւորութիւն գայ, և Ասոր կամքը կատարուի **երկրի՛ վրայ**: Ուստի Զրիստոնեայ եկեղեցւոյ հաւատացեալներու մտքին մէջ, ուրկե՞ եկած է այն մտածումը կամ վարդապետութիւնը, թէ երբ մէկը մեռնի իր անմահ հոգին կ'երթայ երկինք Աստուծոյ բով:

Նախ մարդ արարածը չունի *"անմահ հոգի"* մը: Անմահութիւն ունեցող միակ էութիւնն ու Իսկութիւնը, Արարիչ Աստուած Ի՛նքն է: Այս մասին Պօղոս առաքեալ ջատ յստակօրէն գրած ու բացատրած է իր Տիմոթէոս աջակերտին ըսելով.

***«Երանելին և միակ Հօգորը, Թագաւորներու Թագաւորը և
աէրերու Տէրը. ան՝ որ միայն Ի՛նք ու նի անմահութիւնը և***

**կը բնակի անմաշելի լոյսի մէջ՝ զոր մարդոցմէ ոչ ոք
տեսած է և կարող է տեսնել»--Ա. Տիմոթէոս Զ. 15-16:**

Երկրորդ, մարդակերտումի (ստեղծագործութեան) ընթացքին երբեք յիշատակութիւնը չկայ, թէ Աստուած մարդուն շնորհեց *անմահ հոգի* մը: Ծննդոց գրքին մէջ արձանագրուած համարը հետեւեալն է.

**«Տէր Աստուած գետնին հողէն ջինեց մարդը,
ու անոր ոնգունքներուն կենդանութեան ջունչ
փչեց, ու մարդը կենդանի հոգի եղաւ»--Մնն. Բ.7:**

Վերի գրութիւնը երբեք չ'ըսեր. «ու մարդ **անմահ հոգի եղաւ**, այլ կ'ըսէ **«կենդանի հոգի»** եղաւ, որ կը նշանակէ «կենդանի անձնաւորութիւն» կամ «ապրող էակ մը եղաւ»:

Ուստի, եկեղեցւոյ աւանդութեան մէջ ե՞րբ և ինչպէ՞ս մուտք գործեց մարդկային հոգւոյ անմահութեան գաղափարը: Քրիստոսի Մարդեղութենէն մօտ 600 տարի առաջ, Պիլթակորոս անուն մեծ իմաստասէր մը կ'ապրէր Միկիլիոյ Յոյն երկրին մէջ: Պիլթագորեանները կրթական մեծ դեր կատարեցին Հարաւային Իտալիոյ յունական գաղութի մէջ: Անոնք Աշխարհի հիմքը, սկիզբն ու պատճառը համարած էին թիւը, որպէս օրինաչափութեան, ներդաշնակութեան մարմնաւորում: Պիլթագորոսի ուսուցման նպատակը գլխաւորապէս բարոյական, քաղաքական ու կրօնական էր:

Պիլթակորոս եղաւ այն անձը որ Եւրոպա բերաւ **հոգւոյ անմահութեան** տեսութիւնը, որ ի՛նք եւս ստացած էր Եգիպտացիներէն: Պիլթակորեան միաբանութիւններ եւս ունին վանական դրութիւն յաւիտենապէս կոյս մնալու ուխտով:

Պղատոն իր ծերութեան իւրացուց Պիլթագորոսի թուագիտական վարկածը և կրօնական "հոգւոյ անմահութեան" խորհրդապաշտ տեսութիւնը: Ինչպէ՞ս կը բացատրէ՞ այն իրողութիւնը՝ թէ տարբեր ազգերու պատկանող մարդիկ, տարբեր ժամանակներու մէջ, մէկը միւսէն անկախօրէն յանգած են նո՛յն եզրակացութեան-- *Տախտենալան կեանքի*, կամ գոյավիճակի: Պիլթակորոս, Սոկրատ, Պղատոն, Կիկերոն, Սենեկա, առանց քրիստոնեայ ըլլալու, հաւատացին հանդերձեալ կեանքին, հաւատացին խորապէս: Ո՛չ որովհետեւ մեր Տէրը Յիսուսի մեռելներէ՛ն Յարութիւն առած ըլլալուն համար, այլ իրենց "հոգւոյ անմահութիւն" տեսութեան պատճառաւ: Աստուածակե՛րտ մարդ արարած չի՛ կրնար համոզուիլ, թէ այս սփանչելի աստուածակերպար արարածը կրնայ կորսուիլ: Մարդ արարածը ի՛ր աստուածանման շաղախին մէջ իսկ կը զգայ յաւիտենական կեանքի գոյութեան: Մարդեղացեալ Յիսուս եկաւ

աշխարհ ցոյց տալու մարդկութեան, այն դուռը, որ կը տանի զիրենք այդ յաւիտենական կեանքին:

«Յիսուս էր ճշմարիտ Լոյսը, որ կը լուսաւորէ ամէն մարդ, որ աշխարհ պիտի գայ: Ան աշխարհի մէջ էր, և աշխարհը անով եղաւ, սակայն աշխարհը չճանչցաւ զայն: Իրենններուն եկաւ, բայց իրենները չընդունեցին զայն: Իսկ անոնք որ ընդունեցին զայն՝ իշխանութիւնը տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիները, անոնց՝ որոնք կը հաւատան իր անունին»--Յով. Ա. 9-12:

Այլ պատճառ մը թէ ինչո՞ւ քրիստոնեաներ կը հաւատան հոգւոյ անմահութեան, ու մահէն յետոյ երկինք երթալու տեսութեան. կարդա՛նք միասին:

Յիսուսի Խաչելութեան, կախուած չարագործներէն մէկը կը հայհոյէր անոր և կ'ըսէր. «Բուն չե՞ս Քրիստոսը, ազատե՛ ինձ զինքդ և մեզ»: Անոր ընկերը, յանդիմանելով զայն, պատասխան տուաւ և ըսաւ «Աստուծմէ չե՞ս վախնար, դուն որ նոյն պատիժը կը կրես: Եւ մենք իրաւացիօրէն արժանի հատուցումը կը ստանանք այն գործերուն համար, զոր ըրինք. իսկ ասկա ոեւէ գեջ բան ըրած չե՛ս: Եւ ըսաւ Յիսուսի. «Յիշէ՛ զիս, Տէ՛ր, երբ գաս Բու արժայութեամբդ»: Եւ Յիսուս ըսաւ անոր. **«Ճշմարիտ կ'ըսեմ Բեզի, այսօր ինձի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս»**--Դուկաս ԻԳ. 39-43:

Յիսուսի վերջին պատասխանը հաւատացեալ աւագակին, իններորդ դարէն յետոյ սխալ կէտադրուեցաւ: Եկեղեցին և աստուածաբան կրօնած եպիսկոպոսները եւս, աննկատ անցած են այս մասին: Բացատրեմ: Մինչեւ իններորդ դար, Թուրքի դժուարութեան, և սակաւթիւ ըլլալուն պատճառաւ, Աստուածաշունչ Գիրքերը չէին կէտադրուէր: Երկրորդ պատճառ, մագաղաթ ջիւնելը շատ սուղ կ'արժէր: Հետեւաբար բազմաթիւ բառեր, փոխանակ իրարմէ բաժնելու, կցուած էին իրարու: Նոյնիսկ Թուականներ, որոնք այբուբենով գրուած էին և ոչ թիւով, կը շփոթեցնէին ընթերցողը, թէ անոնք եւս բառե՞ր են, թէ թուականներ: Ես անձամբ կարդացած եմ սոյն ոչ կէտադրուած Աւետարաններէն և մեծ դժուարութեան հանդիպած:

Կարդա՛նք Յիսուսի վերջին պատասխանը հաւատացեալ աւագակին: Յիսուս ըսաւ աւագակին. **«Ճշմարիտ կ'ըսեմ Բեզի այսօր, ինձի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս»** : Յիսուս, եթէ մարմինով մեռնելէն յետոյ հոգիով երկինք գացած էր, ինչո՞ւ համար Մարիամ Մագդաղենացիին ըսաւ.

«Այ՛ր՝ մատենարդ ինձի, Բանի որ դեռ չեմ ելած դէպի իմ Հայրս»:

Երբ ան ուզեց երկրպագականօրէն ողջագուրուիլ Յիսուսի ոտներուն.

Յիսուս կը պատասխանէ աւագակին, որուն աստուածաբանական տեսութիւնը ուղիղ է, որովհետեւ ան խնդրած էր Յիսուսէն, ըսելով. *«Յիշէ՛ զիս»*.

Տէ՛ր, երբ գաս քու արձայութեամբդ»: Այս աւագակը այնպէս կ'երեւի, թէ Փարիսեցիի մը զաւակն էր, որովհետեւ միայն փարիսեցիական խմբակը, մեռելներու յարութեան կը հաւատար:

Խաչեցեալ Յիսուս ու հաւատքի եկող աւագակը, երկուքն ալ կ'ապրէին իրենց մահուան վերջին պահը: Մեր Տէրը նոյնիսկ այդ քանի մը բռնութիւնները արժեւորեց *խոստանալով* աւագակին. «Ճշմարիտ *կ'ըսեմ քեզի այսօ՛ր*, ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս»: Յաղթական Փրկիչ Յիսուս, նոյնիսկ Իր չարչարալից մահուան բաժակը ըմպելով, փրկած եղաւ թշուառ ու ողորմելի աւագակն ու խաչքամող հարիւրապետը, որ դարձաւ առաջին Բրիստոնեայ Հռոմէացին ու նահատակը, որ կը կոչուի Ղուկիանոս՝ Եկեղեցական պատմութեան մէջ:

Կրօնք և հանդերձեալ կեանք՝ հաշտընթաց են, բացարձակապէս: Արիստոտէլ և իրեն հետեւող յունական դպրոցները, Պիլթագորոսութիւնն իբրեւ պաշտօնական իմաստասիրութիւն անտես թողուցին, սակայն Պիլթագորեան գաղտնի ընկերութիւններ իրենց խորհուրդներով պահեցին այդ ըղձանքը, որ վերջ ի վերջոյ սոգորեց Հռոմէական աշխարհի խորհող և զգայուն հոգիները:

Երբ Բրիստոնեայ Եկեղեցւոյ հաւատացեալներն ալ նահատակուիլ սկսան սուրբ առաքեալներու չարչարալից մահէն յետոյ, բազմաթիւ եկեղեցիներու առաջնորդներուն հաշտընթաց նկատուեցաւ "հոգւոյ անմահութեան" և մահուամբ "երկինք երթալու" գաղափարը որպէս միաթարութիւն և բաջալե-րանք նահատակուողներուն:

Թող չկարծուի, թէ միայն "հոգւոյ անմահութեան" և "երկինք երթալու" վարդապետութիւնը սպրդած է Սուրբ Եկեղեցւոյ" հաւատամքին մէջ, այլ նաեւ բազմաթիւ ուրիշ հաւատալիքներ եւս: Օրինակ՝ Յիսուս Ի՛նք պատմեց թէ՛

***Երբ մարդիկ քու նի մէջ էին՝ անոր թշնամին եկաւ,
ցանուած ցորենին վրայ որոմ ցանեց ու զնաց:***

Մեր Տէրը Յիսուս Բրիստոս Ի՛նք ցանած էր ցորենը: Ան կը զգուշացնէ Իր Եկեղեցւոյ առաջնորդներն ու հաւատարիմ սպասաւորները որ չֆնանան, այլ գիշեր ու ցերեկ պաշտպան կանգնին Աւետարանին ճշմարտութիւններուն: Յիսուսը սիրող և պաշտպան կանգնող Պետրոս առաքեալ կ'ըսէ. *«Արթն՛ն և կեցե՛ք, հսկեցե՛ք, քանի որ ձեր ոտիքը՝ Մատանան, կը մոռնէ առիւծի մը նման, կը ջրջի և կը փնտռէ թէ գո՛վ կլլէ: Գիտարեցե՛ք անոր՝ հաստատու և ըլլալով հաւատքին մէջ. գիտեցե՛ք որ ձեր եղբայրական համայնքը այս աշխարհի մէջ իր վրայ կը կրէ չարչարանքներու և նոյն փորձութիւնները»*
--Ա Պետրոս Ե. 8-9:

Տէր Յիսուս պիտի վերադարձնայ աշխարհ, ոչ միայն յարութիւն տալու Իր

հաւատացեալ ննջեցեալներուն, այլ՝ այն տիեզերական պայքարամարտին երբ Մատանան պիտի պարտուի ու կորստեան մատնուի, որու մասին առաքեալները գրած են.

1. «Որմէ ետք պիտի գայ վախճանը, երբ Քրիստոս թագաւորութիւնը պիտի յանձնէ Հօր Աստուծոյ, ոչնչացնելէ ետք ոգեղէն աշխարհի չար իշխանութիւններ (Մատանային), պետութիւնները և զօրութիւնները: Որովհետեւ Քրիստոս պիտի թագաւորէ՝ մինչեւ որ Աստուած բոլոր թշնամիները անոր ոտներուն տակ դնէ իբրեւ պատուանդան: Վերջին թշնամին որ պիտի բնաջնջուի՝ Մահը պիտի ըլլայ: Այդպիսով պիտի կատարուի մարգարէութիւնը, թէ "Աստուած ամէն բան անոր երթարկեց"»--Ա. Կորնթ. ԺԵ. 24-27:

2. «Երբայրնե՛ր, չեմ ուզեր որ անգէտ ըլլաք ննջեցեալներու մասին, որպէսզի չտխրիք ուրիշներու նման, որոնք յոյս չունին: ... Որովհետեւ Տէրը ինք հրամանով, հրեշտակապետին ձայնով և Աստուծոյ շեփորով պիտի իջնէ երկինքէն, և ամենէն առաջ յարութիւն պիտի առնեն ի Քրիստոս մեռածները: Ապա մենք ալ, որ կենդանի մնացած պիտի ըլլանք, անոնց հետ միասին պիտի յաիշտակուինք տարուիմք ամպերու վրայէն Տիրոջ ընդառաջ, օդին մէջ, և այդպէս Տիրոջ հետ պիտի ըլլանք մշտապէս»--Ա. Թեսաղ. Դ.12-16:

3. «Արդար է Աստուծոյ առջեւ ձեզի ներութիւն պատճառողներուն ներութիւն հասուցանել, իսկ ձեզի՝ ներութիւն կրածներուդ՝ հանգիստ մեզի հետ, երբ Տէր Յիսուս պիտի յայտնուի երկինքէն իր զօրութեան հրեշտակներով, կրակի բոցով վրէժ լուծելու համար անոնցմէ՝ որոնք չեն ճանչնար զԱստուած և չեն հնազանդիր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին: Անոնց պատիժը պիտի ըլլայ յախտեանական կործանումը, հեռու Տիրոջ տեսութենէն և Անոր զօրութեան փառքէն»--Բ. Թեսաղ. Ա. 6-9:

4. «Թող ոչ ոք ոչ մէկ կերպով խաբէ ձեզ. որովհետեւ այն օրը պիտի չգայ, եթէ նախ չի գայ ապստամբութիւնը և չյայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստեան որդին՝ Հակարակորդը, որ կը գորոզանայ այն ամենուն վրայ՝ որ կը կոչուի աստուած կամ պաշտամունքի առարկայ մինչեւ այն աստիճան՝ որ ան պիտի նստի Աստուծոյ տաճարին մէջ և պիտի ցոյց տայ ինքզինք թէ Աստուած է: Չէ՞ք յիշեր թէ երբ դեռ ձեզի հետ էի՝ կ'ըսէի այդ բանը» --Բ. Թես. Բ. 3-6:

5. «Զարին գալուստը Մատանային ներգործութեամբ է՝ ամենայն զօրութեամբ, նշաններով, խաբէութեան զօրաւոր գործերով և անիրաւութեան բոլոր պատրանքներով՝ կորստեան մատնուածներուն հանդէպ. և այդ ամէնը այն բանին փոխարէն, որ անոնք չընդունեցին ճշմարտութեան սէրը, որպէսզի փրկուին: Անոր համար ալ Աստուած անոնց պիտի դրկէ մոլորութեան զօրութիւնը, որպէսզի անոնք հաւատան սուտին, և դատապարտուին բոլոր անոնք՝ որ չհաւատացին ճշմարտութեան և հաճոյք գտան անօրէնութեան մէջ»--Բ. Թեսա. Բ. 9-11:

Վերոյիշեալ հինգ հատուածները մէջբերում եղած են, որպէսզի ընթերցողները, իրենք անձամբ կարդան առաքելական պատգամները Աւետարանէն: Մեզի, հաւատացեալներուս, Պօղոս առաքեալ կը պատուիրէ ո՛չ թէ **տանջ մեղաւորները**, այլ՝ այդ մեղաւորները դրո՞ր՛դ չարը՝ Սատանան: Սատանային մեծագոյն խաբէութիւնը կամ նենգութիւնը, ինքզինք անտեսանելի և անճանաչելի ընելուն մէջն է, այսինքն անգոյ և աներեւոյթ ընելուն մէջ կը կայանայ: Ան դիմակաւոր է, իր գործունէութիւնը միշտ ուրիշի մը միջոցաւ կը գործէ ու ինք կը մնայ ծածկուած: Սոյն պատճառաւ մարդիկ կը կարծեն, թէ մեղաւորն է չարը և խաբեբան: Նոյն իսկ կը կարդանք, թէ Սատանան ի՛նք մտաւ Յուդայի ներսիդին որպէսզի այնպէս կարծուի, թէ Յուդան ի՛նք մտնած եղաւ իր Վարդապետը:

Յիսուս ինչպէ՞ս կը բացատրէ չարը: Ան կ'ըսէ. «Երբ պիղծ ոգին դուքս կ'ելլէ մարդէն՝ կը շրջի անջրդի տեղեր, հանգիստ կը փնտռէ և չի գտներ: Այն ատեն կ'ըսէ՝ դառնամ իմ տունս ուրկէ ելայ. կու գայ և զայն պարապ կը գտնէ՝ մաքրուած ու կարգի դրուած: Այն ատեն կ'երթայ և իր հետ կ'առնէ իրմէ աւելի չար եօթը ուրիշ ոգիներ ու մտնելով կը բնակի այնտեղ. և այդ մարդուն վերջը կ'ըլլայ աւելի գէշ, քան առաջ էր. այսպէս պիտի ըլլայ նաև այս չար սերունդին»--Մատթէոս ԺԲ. 43-45:

Աստուած պատկերաւոր կերպով կը յայտնէ Իր սիրած մարդ արարածին տիեզերք համակարգին համայնապատկեր ստեղծագործութիւնը: Ան սկսաւ ստեղծագործել երկինքը երկիր իջեցնելով և երկրայինը երկնայինով շաղախելով ու պայծառակերպելով: Մարդաշխարհը ցարդ, միակ երկրագունդն է ուր կայ կեանք և խայտանք: Մակայն թջնամին՝ Սատանան ալ ցանած է որով, որովհետև երկիրը գործող մարդ արարածը չէ կրցած մնալ արթուն:

Մարդկային կեանքը երկնատուր շնորհ մըն է մարդկութեան, որուն համար բոլորս ալ պարտական ենք փառաբանել զԱստուած: Կեանքը Աստուծոյ գերագոյն պարգեւն է մարդկութեան: Արարիչ Աստուած չէ բաւականացած զարդարելով երկրագունդը միայն բուսականութեամբ և կենդանիներով, այլ փափաքած է նաև ընել մարդ արարածը Իրեն կերպարանակից և աշխատակից: Հետևաբար մարդը պէտք է գիտնայ իր կեանքը արժեւորել, բայց արժեւորման նախապայմաններէն կարեւորագոյնը՝ ուղի՛ղ ճանչնալ է իր Արարիչը:

Կեանքը շնորհուած է մարդկութեան որպէսզի զիրար սիրեն և օգնեն: Ո՛վ որ իր կեանքը կը բաժնէ ուրիշին հետ, անոր հոգին կը լեցուի կեանքի Ակնադրբիւրէն՝ Աստուծմէ: Ան կը սկսի ապրիլ ճշմարիտ կեանքը՝ **վերածընեա՛լ** կեանքը: Կեանքը սոսկ ապրիլ մը չէ՛ ապրելու համար, այլ՝ գիտա՛կցօրէն ապրիլ, պատրաստուելու համար յաւիտենականին: Մարդ կեանքը մտածումի փոխելու է և մտածումը ապրումի՝ այսինքն իրագործումի: Աջագուրկներ էին Հովնաթոս, Ճոն Միլթըն, Հելլէն Բելլըր, որոնք մտքի լոյսին փողահարները ու ջահակիրները դարձան իրենց դիւցազներգակ աշխարհա-

հրուչակ գրական ստեղծագործութեամբ: Որովհետեւ անոնք ճանչցան թէ իրենց վերեւ կայ Արարիչն ու Տուհչը բարեաց: Կեանքը իսկութեան մէջ հոգեւոր է և բարոյական սկզբունքներով կը կառավարուի, անոնց համար, որոնք ճանչցած են զԱստուած ու սիրած մարդկութիւնը:

Կեանքը կը դադրի պարզ գոյութիւն մը ըլլալէ ու կը դառնայ արդիւնաբեր աստուածահրաշ ստեղծագործութիւն: Կայ չարութիւն, կայ մեղանչում և այլատերում, աշխարհի մէջ, բայց կայ նաեւ ստեղծագործութիւն, և բարձր ոլորտ, և աղօթք, և սրբութիւն, և մաքրութիւն: Աստուծոյ գերազանց և հրաշակագոյն ստեղծագործութիւնը մարդ արարածն է: Մարդկային ստեղծագործութիւնը պիտի հասնի իր լրումին, այնպէս ինչպէս շերամի թրթուրը ծակելով իր բոժոժը դուրս կու գայ փոխակերպուած որպէս թիթեռնիկ:

Այս շերամ թրթուրին՝ թիթեռնիկի՝ փոխակերպութիւնը, նմոյշ մըն է մեռելոց Յարութեան, երբ Յաղթական Յիսուս վերադառնայ աշխարհ յարութիւն տալու իր անհամար հաւատարիմներուն, ծառաներուն և Ձինքը սիրողներուն: Ծերամին թրթուրը որ միայն կրնար սողալ գետնի վրայ, իր կերպարանափոխութենէն (յարութենէն) յետոյ, նորէ՛ն կ'ապրի նոյն հողին վրայ: Բայց ո՛չ երբեք որպէս սողուն մը, այլ որպէս թռչող թիթեռնիկ, որովհետեւ յաղթած է իր հողայնութեան ու դարձած հոգեղէն: Անոր փափաքն ու աղօթքը կատարուած եղելութիւն մըն է, ո՛չ թէ որովհետեւ գացած է երկինք, այլ ի՛նք դարձած է երկնայի՛ն տիրապետելու համար երկրայինին:

Եթէ բոլոր սուրբերն ու Յիսուսը սիրողներ արդէն մեկնած են երկինք, իրենց մահէն յետոյ և կ'ապրին խաղաղ և հանգիստ Աստուծոյ ներկայութեան ներքեւ, ի՛նչ հարկը կայ Յիսուսին վերադարձը դէպի աշխարհ: Ի՞նչ պէտքը կայ մեռելներու յարութեան, երբ արդէն հոգեպէս կ'ապրին Աստուծոյ լուսափայլ երկնակամարին տակ ցնծագին և հրեջատակային երաժշտութեամբ: Այս բոլոր մտածումներն ու երեւակայութիւնները մանկական երազային կարծիքներ են, որոնք սարդած են կարգ մը Քրիստոնեայ կոչուած անձերու մտայնութեան մէջ:

Ճանչնալու և հասկնալու համար Քրիստոսի Բարոզած Աստուծոյ Թագաւորութիւնը և ըմբռնելու այդ պատգամներուն իմաստը, հաւատացեալէն կը պահանջուի ամբողջական անձնանուիրում և Աւետարանի խոր ուսումնասիրութիւն: Տէր Յիսուս անստղեակ չպահեց Իր աշակերտները գալիք երկնային արքայութենէն և յաւիտենական կեանքէն:

1. Աշակերտներուն մտայնութիւնը ջիոթանքի մէջ էր, որովհետեւ չէին կրնար զանազանել Յաւիտենական Կեանքը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը, Իսրայէլի և Դաւիթի Թագաւորութենէն: Օր մը երբ Յիսուս և աշակերտները առանձին հաւաքուած էին, Պետրոս աշակերտ ջանաց յայտնել իր ջիոթանքը Յիսուսի և հարցուց Անոր. «Ահա՛ւասիկ, մենք ամէն բան թողուցինք և բոլորովն

եստեղ եկանք. **արդ. մենք ի՞նչ պիտի ունենանք**»։ Պետրոս աշակերտ շատ գործնական և դրական անձ մըն էր։ Յիսուս պատասխանեց, և ակնարկելով 12-ին ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք որ եկաք իմ ետեւէս, երկրորդ Գալստեան (երկրի վրայ), երբ Մարդու որդին նստի Իր աթոռին վրայ, դուք ալ պիտի նստիք տասներկու աթոռներու վրայ՝ դատելու համար Իսրայելի տասներկու ցեղերը։

«Եւ Ամէն ոք (ձեզմէ զատ մնացեալ բոլոր հաւատացեալները) որ ձգեց տուն կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ որդիներ, կամ ազարակներ՝ Իմ անուանս համար, հարիւրապատիկ պիտի ստանայ և յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ։ Ծատ արաջիներ վերջին պիտի ըլլան, իսկ վերջիններ՝ արաջին»--Մատթ. ԺԹ. 27-30:

2. Կարդանք Յիսուսի նոյն խոստումը, նաեւ Մարկոսի Աւետարանին մէջ. Ասոր վրայ Պետրոս ըսաւ Յիսուսի. «Ահա մեր ամբողջ ունեցածը ձգեցինք և հետեւեցանք քեզի։ Յիսուս անոր ըսաւ. «Վստահ եղէք, ով որ կը ձգէ տուն, եղբայրներ, քոյրեր, հայր, մայր, զաւակներ և ազարակներ՝ ինծի համար կամ Աւետարանին համար, ներկայ կեանքին մէջ հարիւրապատիկ տուներ, եղբայրներ, քոյրեր, մայրեր զաւակներ և ազարակներ պիտի ունենայ, ինչպէս նաեւ հալածանքներ պիտի կրէ, և գալիք աշխարհին մէջ յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ։ Ծատեր որոնք հիմա արաջին են՝ վերջին պիտի ըլլան, և զատ մը վերջիններ՝ արաջին»--Մարկ. Ժ. 28-31:

3. Տեսնենք թէ Ղուկաս աւետարանագիր ի՞նչ գրած է այս մասին։ Ասոր վրայ՝ Պետրոս ըսաւ. «Ահա մեր ամբողջ ունեցածը ձգեցինք և հետեւեցանք քեզի»։ Յիսուս անոնց ըսաւ. «Վստահ եղէք, ով որ կը ձգէ տուն, ծնողք, եղբայրներ և կամ զաւակներ՝ Աստուծոյ արքայութեան համար, ներկայ կեանքին մէջ բազմապատիկը պիտի առնէ և գալիք աշխարհին մէջ՝ յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ»--Ղուկ. ԺԸ. 28-30:

Զափազանց և որոշ նկատողութեան արժանի է, որ Յիսուսի բոլոր խոստումները և փրկուածներու ժառանգելիք յաւիտենական կեանքը **գալիք աշխարհին**՝ մէջ է կ'ըսէ Յիսուս։ Արարիչ Աստուած, եթէ կ'ուզէր Իր ստեղծած մարդ արարածը երկինքի մէջ ապրեցնել, ինչո՞ւ համար զարդարեց երկրագունդը լեռներով, հովիտներով, լիճերով և երկրի երեսը գեղեցկացուց կանաչ խոտով ծառերով ու չֆնաղ և բուրումնալից ծաղիկներով ու բազմատեսակ կենդանիներով, թռչուններով և ձուկերով։

Անհուն տիեզերքի և անսահման երկնային միջոցին մէկ անձեւ ու պարապ աշխարհը, Աստուած վերածեց դրախտի և Իր բարձրագոյն ձեռարուեստ մարդ արարածը իշխան կարգեց որ գործէ երկիրը։ Թէեւ մարդու բնակավայրը երկրի վրայ է, սակայն այդ երկիրը կը ծփայ երկինքի օդին մէջ։ Մարդ արարած, իրականութեան մէջ թէեւ կ'ապրի երկրի վրայ սակայն ինք երկինքի մէջ է։ Միթէ բոլոր աստղերն ու մոլորակները երկինքի ոլորտին

մէջ չե՞ն: Իսկ եթէ չեն, հապա ո՞ւր են: Յիսուս երբ ուզեց բացատրել Հայր Աստուածը Սամարացի կնոջ, ըսաւ անոր թէ Աստուած կը պաշտուի ո՛չ երուսաղէմի և ո՛չ ալ Սամարիոյ մէջ, այլ՝ որովհետեւ Աստուած Հոգի է, Ան կը պաշտուի Հոգիով և Ճշմարտութեամբ, այսինքն մաքուր սրտով և անկեղծ հոգիով:

Մարդիկ զԱստուած նիւթականացուցած և սահմանաւորած էին որպէս-գի կարենան սեփականացնել և ազգայնացնել զԱյն: Մինչեւ Աստուած Որդւոյն Մարդեղութիւնը, ամէն ազգ աստուած մը ունէր ու եհովա ալ չրեաներուն Աստուածն էր: Յիսուսի Մարդեղութեամբ Աստուած ճանչցուեցաւ համա՛յն մարդկութեան Արարիչը, Պահապանը և ողորմած Հայր Երկնաւորը: Այս բոլոր եղելութիւնները և դէպք՝ իրողութիւնները տեղի ունեցան ա՛յս երկրագունդին աշխարհին վրայ, որ Աստուած շնորհած էր Իրեն կերպարանակից եղող մարդ արարածին:

Ի՞նչ է պատճառը արդեօք, որ մարդիկ կ'ուզեն երկինք երթալ երբ Աստուած որպէս Հոգի ամէն տեղ է, թէ՛ երկնքի և թէ՛ երկրի վրայ, և մեր աղօթքը կ'իմանայ ո՛չ թէ միայն եկեղեցոյ մը խորանին ծնրադիր ըլլալով, այլ մտնելով մեր սենեակէն ներս, փակելով դուռը և գաղտնապէս աղօթելով Իրեն, որ կը լսէ՛ մեր մտքին աղօթքը և սիրով կը պատասխանէ մեզի:

Քրիստոսի մարդեղացումէն առաջ բոլոր կրօնքները, հեռացուցած էին զԱստուած մարդոցմէ ու միայն զոհագործութեամբ ու տաճարի մը մէջ Ան մտիկ կ'ընէր աղօթողի մը խնդրանքը: Հեթանոս աստուածները նիւթականացուած էին և հրեաներուն Աստուածն ալ ազգայնացուած էր Յիսուս Քրիստոսի՝ Մարդեղութեամբ Հայր Աստուած մօտեցաւ մարդ արարածին: Անոր Միածին՝ Յիսուսով միայն, մարդ ճանչցաւ Աստուած Ճշմարիտը, որ մարդկութեան Հայր Երկնաւորը եղաւ, փոխանակ ճանչցուելու որպէս պատժող Դատաւոր մը:

Այսպիսի եզակի աշխարհ մը ուր Աստուած և մարդ, Հայր Երկնաւորը և անառակ որդին իրար գտան ու ճանչցան Խաչեցեալին անձնագոհ նուիրումով, պիտի լինի՞ Աստուծմէ ու մարդոցմէ և պիտի հաւաքուի երկնքի մէջ: Ինչո՞ւ չսերտել Աւետարանը ու չկարենալ տեսնել թէ մարդ արարածը սկիզբէն ի վեր երկրի վրայ ու երկինքի մէջ է:

Յիսուս Ինք խորհրդաւոր կերպով ըսած եղաւ նիկողեմոսին, թէ ի՞նչպէս անձ մը կրնայ ըլլալ *թէ երկրի վրայ և թէ երկնքի մէջ*, երբ վերջացուց Իր խօսակցութիւնը հետեւեալ նախադասութեամբ.

«Արդ, ոչ ոք երկինք ելած է, բացի միայն անկէ, որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է»:

Օգոստոս 10, 2003

Թորոնթօ

ՉԵՄ ՈՒՋԵՐ ՈՐ ԱՆԳԷՏ ԸԼԼԱՔ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

--Ա թես. Գ.12

Յիսուս ի՞նչ ընելու պիտի գայ երկրորդ անգամ աշխարհ: Ան պիտի գայ աշխարհ, ճանչցուելու համար մի միայն Ձինք սիրողներուն կողմէ. «Ձիս այլես պիտի չտեսնե՛ք, մի՛նչեւ որ ըսե՛ք՝ օրհնեա՛լ է Ան, որ կու գայ Տիրոջ անունով»--Մարկ. ԻԳ.28:

Յիսուս Զրիստոս *«աշխարհ»* բառը գործածած է զանազան նշանակութիւններով և իմաստներով:

1. Երկրագունդ, որպէս մոլորակ,
2. Որպէս ապրող մարդկութիւն,
3. Որպէս մարդկային բարոյական ապրելակերպ,
4. Ազգերու քաղաքական իշխանութիւնը և թագաւորութիւնը,
5. Որպէս հարստութիւն և զօրութիւն:

Աջակերտներուն հարցումը. «Ի՞նչ պիտի ըլլայ նշանը քու Գալուստիդ և այս աշխարհի վախճանը»--Մատթ. ԻԴ. 3:

Սկիզբն Երկանց--Մատթ. ԻԴ. 4-14.

Յիսուս պատասխանեց և ըսաւ անոնց. «Ձգո՛յջ եղե՛ք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ. որովհետեւ շատեր պիտի գան իմ անունովս ու պիտի ըսեն թէ՛ ես եմ Զրիստոսը, և պիտի մոլորեցնեն շատերը: Պիտի լսե՛ք պատերազմներու ձայներ և լուրեր պատերազմներու մասին. զգո՛յջ եղե՛ք, չխուովի՛ք, որովհետեւ այդ ամէնը պէ՛տք է որ ըլլայ, բայց ասիկա դեռ վախճանը չէ: Ազգ ազգի դէմ պիտի ելլէ, և թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ, և տեղ-տեղ պիտի ըլլան սով, սրածուծիւններ ու երկրաշարժներ: Եւ սակայն այս բոլորը սկիզբն է երկանց»--Մատթ. ԻԴ. 4-7:

«Այն ատեն ձեզ նեղութեան պիտի մատնեն և պիտի սպաննեն ձեզ: Եւ իմ անուանս պատճառով ատելի պիտի ըլլա՛ք բոլոր ազգերէն: Եւ այն ատեն շատեր պիտի գայթակղին և զիրար պիտի մատնեն ու զիրար պիտի ատեն: Եւ բազում սուտ մարգարէներ պիտի ելլեն ու պիտի մոլորեցնեն շատերը: Եւ անօրէնութեան բազմանալուն պատճառով շատերուն սերը պիտի ցամփի: Բայց ով որ մի՛նչեւ վերջը համբերե՛՛ ան պիտի փրկուի: Եւ Արեւոյութեան այս Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ տիեզերքի մէջ՝ ի վկայութիւն բոլոր հեթանոսներուն: Եւ ապա պիտի գայ վախճանը»--Ց--14:

«Շատեր պիտի գան իմ անունովս ու պիտի ըսեն թէ՛ ես եմ Զրիստոսը և պիտի մոլորեցնեն շատերը»--համար--5:

«Զրիստոս» անունը կը նշանակէ անպարտելի օծեալ, յաղթական և զօրութիւն: Մեր կեանքի ընթացքին ականատես եղանք, Հիթլերի, Մուսոլինիի և

Ճարոնի: Այսօր, ակնատես եմ Աստուծոյ անունով անաստուած Միացեալ Նահանգներ--Ամերիկայի:

«Պիտի լսե՛ք պատերազմներու ձայներն»--համար--6:

Ամերիկեան կառավարութիւնը չ'արտօներ որ հեռատեսիլի վրայ մարդկութիւնը իմանայ Սուտանի մէջ սպաննուած Յ միլիոն չարաւային Սուտանցի Քրիստոնէաներու ջարդը:

1. *«Միաժողովիւ ններ»*: ջարդ և նախճիր ընդհանուր Ափրիկէի ցամաքամասին վրայ:
2. *«Երկրաջարժներ, սովեր և երաջտութիւն»*: Ինչո՞ւ ժողովուրդներ Գանատա կը գաղթեն: Հետաքրքրուա՞ծ եմ:
3. *«Ի՞նչ անուանա համար ասելի պիտի ըլլա՞ք բոլոր ազգերէն»* --համար 9: Մի միայն Կաթոլիկ եկեղեցին է որուն Պապը բողոքեց 10 անգամներ Քրիստոնէայ կոչուած ազգերուն, որպէսզի ճշմարտութիւն լրագրեն իրենց ժողովուրդներուն: Ի՞նչ կ'ընեն Ամերիկայի Քրիստոնէայ կոչուած եկեղեցիներու պետերը: Ո՞ւր է Պիլի Կրահամ կոչուած համաշխարհային ֆարոգիչը: Ինչո՞ւ Բողոքական և Ուղղաբար "կոչուած" եկեղեցիները լուռ են:

Աստուծոյ Թագաւորութեան Աւետարանը պիտի ֆարոգուի ամբողջ տիեզերքի մէջ: Առաքեալներու շրջանին Քրիստոսի Աւետարանին ֆարոգութիւնը Ս. Պատարագի դերակատարումը չէր, այլ Տիրոջ Աւետարանին Խօսքերը ***բացատրել, լուսաբանել և մեկնաբանել էր:***

"Արեգակը պիտի խաւարի, երկինքի գօրութիւնները պիտի ջարժին: Ապա պիտի երեսի երկինքի վրայ Մարդու Որդիին նշանը"--Մատթ. ԻԴ.30:

1. Ի՞նչ է Մարդու որդւոյն նշանը.--Խա՞չը, Ջուկը թէ Իր անձնական և փառաւոր երեսումը
2. Յիսուս, Իր յաղթական Յարութենէն յետոյ իսկ Իր աշակերտներուն կողմէ, միայն Իր ուզած ժամանակին կը յայտնուէր:
3. Այսօր եւս հաւատացեալներ կ'երթան եկեղեցի, սակայն քանի՞ աղօթող կը ճանչնայ Ջիւնքը:
4. Մինչեւ որ Յիսուս Ի՞նչ չյայտնէ Ինքզինք մեզի, մենք Ջիւնք պիտի չճանչնանք--Կարդանք միասին. *«մէ՛նք կը ճանչնայ Որդիին, եթէ ոչ՝ Հայրը և ոչ ոք կը ճանչնայ Հայրը, եթէ ոչ՝ Որդիին, և ան՝ որուն ուզէ յայտնել Որդիին»*--Մատթ. ԺԱ. 27:
5. Յիսուս յայտնեց Ինքզինք միա՛յն անոնց, որոնք Ջիւնք իրենց տունը հիւրասիրեցին. երկրորդ՝ անոնց որոնք Ջիւնք փնտոեցին, և երրորդ անոնց որոնք Ջիւնք սիրեցին:

Եկեղեցի կ'երթանք որպէս պաշտօ՞ն կամ որպէս սովորութի՞ւն, թէ տեսնելու Յիսուսը և իմանալու Անոր Խօսքերը: Տանտիկին մը երբ կերակուր պատրաստէ ընտանիքին համար, այդ աշխատանքը կ'ընէ որպէս պարտակա-

նութի՞ւն, թէ ընտանիքը սիրած ըլլալուն համար:

Յիսուս երբ ըսաւ. «Աստուած Հոգի է» Ան ըսել ուզեց նաեւ թէ Ան սիրելի՛ մըն է, այնպէս ինչպէս մենք մեր սիրած անձին համար կ'ըսենք "հոգի" կամ "ճանիկ" բառերը: Յիսուս, նաեւ այս իմաստով ջանաց բացատրել Արարիչ Հա՛յր Աստուածը:

Յիսուս, Թովմասին ինչո՞ւ Իր Ձեռքերը ցոյց տուաւ: Որովհետեւ Յիսուսի Ձեռքերուն մէջ, ո՛չ թէ ջանթեր ու կայծակներ կային նման հեթանոս աստուածներու, այլ գամերո՞ւն նշանները, մեզ սիրա՞ծ ըլլալո՞ւն նշանները: Յիսուս սիրեց մեզ, ո՛չ թէ նստած բազկաթոռի մը վրայ, այլ՝ մե՛ր տեղը տառապելով ու ցաւ քաջելով:

Յիսուս երբ եկաւ աշխարհ փրկելու համար Իր սիրած մարդկութիւնը, Անոր նշանը եղաւ տառապալից և ցաւատանջ խաչը: Իսկ երկրորդ Գալուն նշանը պիտի ըլլայ յաղթական զօրութիւնը: Զօրութիւն մը, որուն առջեւ Մատանան իսկ պիտի նահանջէ և փախչի: Այն ատեն Յիսուսի նշանը պիտի ըլլայ յարութիւն առած նահատակները, քաջերը, հաւատարիմները և բոլոր Ձինքը սիրող անհամար հաւատացեալները: Որոնց առջեւ անհաւատներն ու Աստուած մերժողները պիտի սարսափին, ողբան ու լան:

Օգոստոս 1, 2003
Հալիպոլթօն, Օնթերիոյ

ԲԱՐԻ ԱՏՈՒԾՈՅ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ՉԱՐԸ ՈՒՐԿԷ՞ ԵԿԱԻ

Բարոյական չարը՝ *սխալ անի* է, իսկ կրօնական չարը՝ *մեղանչում*: Որովհետև մարդ արարած իր սխալանքով կրնայ սորվիլ ուղիղը՝ սխալէն, և տեսնել ծուրը՝ ջիտակէն: Իսկ կրօնակա՛ն մեղանչումը, բարոյական սխալը տեսնելէն յետոյ՝ ապստամբի՛լ է Բարիին դէմ:

Մարդիկ կան, որոնք իրենց բարոյական սխալը կ'ընդունին, իսկ կան անձեր ալ, որոնք չեն ուզեր ընդունիլ, չեն ուզեր խոնարհիլ նոյնիսկ իրենց խղճին առջեւ: Այսպիսի անձեր, փոխանակ խոնարհելու ճշմարտութեան պատուանդանին, իրենց "ես"-ին ու փառքին սիրո՛յն համար կ'ընդվզին ու կ'ըմբոստանան իրենց Արարիչին դէմ: Մարդ արարած, որքան ընդվզի և ըմբոստանայ իր "ես"-ին ու փառքին համար, ա՛յնքան աւելի կը կուրանայ ու կը չարանայ:

«Առարկայական ես»ը, անհատական ինքնութիւնն է, իբրև շարք մը գիտակից գործունէութեանց, նաեւ իբրև իմացական-զգացական բովանդակութիւն մը: «Զուտ ես»ը (pure ego) ինքնութիւնն է՝ սակայն ո՛չ իբրև առարկայական-փորձառական սկզբունք, այլ՝ ներհայեցողակա՛ն կերպով մը եզրականացուած (inferred):

Երբ ունէ արարած, մարդկային կամ հոգեղէն, իր «ես»ը պաշտամունքի առարկայ դարձնէ, ա՛յդ կրօնական մեղանչում (կուպաշտութիւն) է, որուն հետեւանքը կուրութիւն կ'ըլլայ:

Բարոյական և կրօնական չարին հետեւանքները յստակօրէն կ'երեւին "Անառակ Որդի"ին առակին մէջ.--

1. Կրօսեր եղբայրը իր մարմնական հաճոյքները գոհացնելու համար կը թողու հօրէնական տունը և կը մեկնի վայելելու մարմնական հեշտանքները: Ինչպէս որ մարմինը կը մահանայ, նոյնպէս ալ մարմնական ցանկութիւնները ունին իրենց վերջաւորութիւնը: Կրօսեր եղբայրը երբ կը հասնի մարմնական հաճոյքներու վախճանին, ինքզինք կը գտնէ անօթի, մերկ և միայնակ:

Մարդ արարածը միայն *առանձնութեա՛ն* մէջ կը խորհի, և խորհողութեան մէջ *մարդ արարած կու գայ ինքզինքին*: Մարդ արարած, մարմնական կիրքերու ցանկայարոյց շրջանին, իր ինքնութիւնը՝ "ես"-ը արդէն հեռացած կ'ըլլայ ինքզինքէն, որովհետև մտածող և խորհող ըլլալէ կը դարդի ան: Անոր էութիւնը հոգեկան արբեցութեա՛ն մէջ, ցնորական երազատես մը դարձած կ'ըլլայ:

Երազային սթափումէն յետոյ, երբ մարդ կը սկսի խորհիլ իր հեռացած առարկայական անձնաւորութիւնը կը վերադառնայ տուն և մարդ էակը կը սկսի մտածել և խորհիլ: Մարդկային այսպիսի փորձառութիւնը կը կոչուի.

"ինֆզինֆին գալ": Անառակին, հօրէնական սուսէն հեռանալը, իր "ես"-ին և իր փառֆին համար չէր, այլ իր մարմնական կիրֆերու յագեցման: Սոյն պատճառաւ ան կրցաւ գալ ինֆզինֆին: Ան ոչ միայն եկաւ "ինֆզինֆին", այլ ան վերադարձաւ մինչեւ հօրէնական սուսն և փրկութիւն:

2. Իսկ անդին, երէց եղբայրը, որ կը կարծուէր ըլլալ հօրը հաւատարիմ զաւակը, ի վերջոյ դիմակազերծ ըլլալով, գործեց *կրօնական չարը*, որ կը կոչուի *մեղանչում*: Երէց եղբայրը ուրախ էր, որ իր կրտսեր եղբայրը հեռացաւ սուսէն և հօրը մնացած բոլոր ժառանգութիւնը այլեւս իրեն կը պատկանէր:

Արեւամուտին երբ ան վերադարձաւ սուսն և լսեց երածջտութեան ձայնն ու ուրախութեան երգերը, չկրցաւ հաւատալ իր ականջներուն: Ան կանչեց հայրը դուրս և ուզեց գիտնալ թէ ի՞նչ պատահած է: Երբ իմացաւ իր եղբօր վերադարձը, փոխանակ ուրախանալու, ան բարկացաւ, ոչ միայն եղբօրը վերադարձին, այլ նաեւ իր հօրը, որ զայն ընդունած էր: Իր ակնարկութեան մէջ, փոխանակ *եղբայր* կոչելու իր կրտսերը, ան իր զայրոյթին մէջ, զայն կը կոչէ "Զու՛ որդիդ": Ան ժամանակ չունի խորհելու և ինֆզինֆին գալու, որովհետեւ իր գործածը ո՛չ թէ բարոյական չարն էր, այլ կրօնական: Իր զայրոյթին մէջ ան կը հետեւէր իր "ես"-ին և իր փառֆին, ոչ իր մարմնի վայելֆին: Անոր "ես"-ը և փառֆի արբեցողութիւնը, ըլլալով հոգեկան իրագործութիւններ, պատճառ դարձան որ հօրը սարքած խնճոյքէն հեռանայ և մասնակից չ'ըլլայ:

Արարիչ Աստուած, եթէ մարդ արարածին տուաւ "ազատ կամֆ", ինչո՞ւ չհաւատալ, թէ Ան տուած է "ազատ կամֆ" նաեւ ուրիշ հոգեղէն էակներու ալ: Մեր անգիտութիւնը ապացոյց մը չէ, թէ Աստուած ի՞նչ ըրած է մեր տեսանելիութենէ և մտածողութենէ դուրս:

Մարդեղացեալ Որդին Աստուծոյ Իր աջակերտները դաստիարակած ջրջանին, ուսուցանեց անոնց ո՛չ միայն աշխարհի վրայ չարութեան և աստուածային օրէնֆին դէմ մեղանչումի մասին, այլ նաեւ այն հոգեկան էակին, որ կը դրդէ ու կը գրգռէ մարդ արարածները որ մեղանչեն Աստուծոյ դէմ, ու հաւաքուին իր դրօշին տակ: Յիսուս նոյնիսկ այս ապստամբող հոգեկան էակը կոչեց Սատանա: Այս ապստամբող էակին յանդգնութիւնը այնքա՛ն զօրաւոր է, որ նոյնիսկ այս Սատանա կոչուողը Բաջութիւնը ունեցաւ փորձել նաեւ Աստուծոյ Միածին Որդին:

Սատանա կոչուած այս անձնաւորութեան մասին, Յիսուս Ինք բազմաթիւ անգամներ արտայայտուած է ու նաեւ առաքեալներն ալ գրած են, զգուշացնելու համար հաւատացեալները:

Հին Կտակարանի խիզախ ու խորատես մարգարէն եղած է Եսայի, որ Զրիստոնէական ջրջանին ջատ մը հաւատացեալներ զինք կոչած են "Աւետարանիչ" մարգարէն: Այս մարգարէն իր խորահայեաց տեսութիւնը դարձուցած

է մինչեւ անժամանակներու ժամանակին և ջանացած է գտնել և տեսնել այս
ապստամբող Սատանային յեղափոխական ընդվզումը: Բաջ մարգարէն Եսայի
կը գրէ իր հոգեկա՛ն յայտնութեան մէջ, ըսելով.--

Ով առտուանց ծագող Արուսեակ,
Ինչպէ՛ս երկինքէն ինկար
Ու մինչեւ գետին կործանեցար,
Դուն որ ազգերը նկուն կ'ընէիր:
Դուն սրտիդ մէջ ըսած էիր

Երկինք ելլեմ
Ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր բարձրացնեմ.
Եւ ժողովքի լեռը, չիւսիսի քովերը բնակիմ.
Ամպերու բարձրութիւններուն վրայ ելլեմ,
Բարձրելոյն նմանիմ:

Բայց ահա դժոխքը կ'իջնես, գուքին խորունկ տեղերը.
Քեզ տեսնողները քու վրայ պիտի զարմանան,
Ու քեզի նայելով պիտի ըսեն,
Աս այն մարդն է որ երկիրը կը սարսեր,
Թագաւորութիւնները կը դողացներ,
Աշխարհ անապատ կը դարձներ,
Եւ անոր քաղաքները ակերակ կ'ըներ
Ու իր գերիները տուներնին չէր դրկեր:

Ազգերուն բոլոր Թագաւորները
Ամէն մէկը պատուով իր տանը մէջ կը պառկի
Բայց դուն գարջելի ընձիւղի մը պէս,
Գուքի քարերուն մէջ իջնող
Սրով խոցուած մեռելներուն հանդերձին պէս,
Ուտի տակ կոխուած դիակի պէս
Քու գերեզմանէդ դուքս նետուեցար,
Դուն թաղումով անոնց հետ չես միանար,
Քանզի քու երկիրդ արեցիր
Ու ժողովուրդդ սպաննեցիր,
Զարբերուն սերունդը յաւիտեան պիտի չյիջուի:

Ապանութիւն պատրաստեցէ՛ք անոր տղոցը,
Իրենց հայրերուն անօրէնութեանը համար,

Որպէսզի չելլեն ու երկիրը չժառանգեն,
Եւ աշխարհի երեսը թշնամիներով չլեցնեն:

--**Եսայեայ ԺԳ. 12-21:**

Աղամ ու եւային փորձութիւնը և սխալանքը եթէ նկատենք Յիսուս Զրիստոսի ուսուցումով, հոն պիտի տեսնենք "բարոյակա՛ն" սխալանք և ո՛չ Աստուծոյ դէմ եղած ապստամբութիւն, այնպէս ինչպէս Եսայեայ մարգարէն կը գրէ Սատանային մասին: Եթէ մեր նախածնողներուն սխալը ապստամբութիւն եղած ըլլար, Աստուածայայտ Աւետարանը պիտի չգրէր ըսելով.

«Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի Անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»--Յով. Գ. 6:

Աստուած ինչո՞ւ կը սիրէ մեղաւորը, Ան կը սիրէ, որովհետեւ մեղաւոր մը իր չափահասութեան հասնելու ժամանակաշրջանին **սայթափող և մոլորած** անձ մըն է, ո՛չ Իր Արարչին դէմ *ապստամբ* մը: Մարդկային անհնազանդութիւնը բարոյակա՛ն չարը ըլլալու է, որովհետեւ Աղամ չ'ապստամբեցաւ Աստուծոյ դէմ այլ չափահասութեան ելարանին վրայ սխալեցաւ, սայթափեցաւ և ինկաւ:

Յիսուս Զրիստոս մարդացաւ, եկաւ աշխարհ որպէսզի այդ ինկած, սակայն չափահասութեան հասնիլ փափափողը գտնէ և առաջնորդէ դէպի յաւիտենական կեանքի՝ ներումի և փրկութեան:

Հոգեկան աշխարհի մէջ գտնուող չարը Սատանան որ ապստամբութեան դրօշը բարձրացուց Արարիչ Աստուծոյ դէմ, ինչպէս կը գրէ Եսայեայ մարգարէն, Յիսուս Ինք ալ ակնարկութիւններ ըրաւ Սատանային մասին երբ չարը լիբբօրէն ջանաց Զինք ալ փորձել:

«Եւ Սատանան հանելով Յիսուսը բարձր լեռ մը՝ ակնթարթի մը մէջ ցոյց տուաւ Անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները: Եւ Սատանան ըսաւ Անոր. «Զեզի պիտի տամ այս ամբողջ իշխանութիւնը և ասոնց փառքը, որովհետեւ ինձի տրուած է, և որուն որ ուզեմ՝ կրա տամ զայն: Արդ, եթէ դու ն իմ առջեւ ինկած երկրպագութիւն և ընես՝ բոլորը բռնկը պիտի ըլլայ»: Յիսուս պատասխանեց անոր ու ըսաւ. «Գրուած է՝ Բռն Տէր Աստուծո՛յը երկրպագութիւն և պիտի ընես և միայն զա՛յն պիտի պաշտես»--Ղուկ. Դ. 5-8:

Յիսուս Սատանան կոչեց. "Այս աշխարհի Իշխանը"--Որովհետեւ Սատանան, այս աշխարհի իշխանը, արդէն իսկ դատապարտուած է,--Յով. ԺԶ. 11:

Յիսուսի Աշակերտներուն Մէջբերումները.--

1. **Յովհաննէս առաքեալի վկայութիւնները.** «Գիտենք թէ մենք Աստուծմէ ենք, և ամբողջ աշխարհ *չարի մէջ է*--Ա. Յով. Ե. 19:
2. «Թէպէտ ամբողջ աշխարհը *Չարին ենթակայ* ըլլայ, մենք գիտենք թէ Աստուծմէ ենք»--Ա. Յով. Ե.19:
3. "We know that we are of God, and the whole world is ***under the power of the evil one***"--I John 5:19.
4. **Պօղոս առաքեալի վկայութիւնները.** Յիսուս Զրիստոս Պօղոս առաքեալի երեւնալէն յետոյ կ'ըսէ անոր. «Պիտի դրկեմ բեզ, որ բանաս անոնց աչքերը, իսաւրէն լոյսին դարձնես զանոնք և Սատանայի իշխանութենէն՝ Աստուծոյ, որպէսզի անոնք մեղքերու թողութիւն ստանան և սուրբերու հետ ժառանգութեան բաժին՝ Ինծի հանդէպ ունեցած իրենց հաւատով»--Գործք ԻԶ. 17-18:
5. «*Այս աշխարհի "աստուած"-ը* նկատուած Սատանան կուրցուցած է այդ անհաւատներուն միտքը, որպէսզի չըլլայ որ Աւետարանին բերած լոյսը ծագի անոնց մէջ, այսինքն՝ տեսնեն փառքը Զրիստոսի, որ անտեսանելի Աստուծոյ պատկերն է»--Բ. Կորն.Գ. 4:
6. **Աստուծոյ դէմ ազատամբողները ինչպէ՞ս ճանչնալ.--**
«Բայց Աստուծոյ բարկութիւնը երկինքէն պիտի յայտնուի մարդոց անհաւատութեան և անիրաւութեան համար, որոնց անիրաւութիւնը թոյլ չի տար որ ճշմարտութիւնը երեւան գայ: Որովհետեւ Աստուծոյ մասին ինչ որ կարելի է գիտնալ՝ գիտեն արդէն, Բանի Աստուած Ինք յայտնեց անոնց: *զ'Աստուած ճանչնալով հանդերձ՝ իբրեւ Աստուած չփառաւորեցին և ջնորհակալ չեղան,* այլ՝ անհեթեթ խորհուրդներ ունեցան, որով իրենց միտքը անմտութեամբ իսաւրեցաւ: Իրենք զիրենք իմաստուն համարելով՝ յիմարացան, և *անմահ Աստուծոյ փառքը յատկացուցին մահկանացու մարդոց ... Աստուծոյ վերաբերմամբ ճշմարտութեան փոխարէն տառաջիւնը նախընտրեցին*--Հռոմ. Ա. 18-22
7. «Ի վերջոյ, զօրացէ՛ք Տիրոջմով և իր ամենակարող զօրութեամբ: Ձեր վրայ առէ՛ք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի կարենաք Սատանային հնարքներուն դէմ դնել: Որովհետեւ *մեր պատերազմը մարդոց հետ չէ, այլ՝ երկինքի տակ զտնուող չար ուժիներուն, իշխանութիւններուն և պետութիւններուն, այս իսաւր աշխարհի տիրակալ ներուն դէմ:* Ուստի Աստուծոյ սպառազինութիւնը առէ՛ք, որպէսզի երբ չար օրը գայ՝ կարենաք ետ մղել Չարին հարուածները, և ամէն ինչ ընէ՛ք՝ կանգուն մնալու համար: Հետեւաբար պատրաստ եղէ՛ք. ճշմարտութեամբ ամրապնդեցէ՛ք ձեր մէջքը, արդարութիւնը հագէ՛ք զրահի պէս, և խաղաղութեան Աւետարանը փարօզելու պատրաստակամութիւնը հագէ՛ք կօշիկի պէս: Եւ այս բոլորին վրայ հաւատքի վահանը առէ՛ք, որպէսզի կարենաք մարել Չարին արձակած բոլոր

միացող նետերը: Առե՛ք նաեւ փրկութեան սաղաւարտը և Սուրբ Հոգիին սուրբ, այսինքն՝ Աստուծոյ խօսքը: Այս բոլորին հետ՝ աղօթեցէ՛ք, թախանձագին աղօթեցէ՛ք տեւաբար, Սուրբ Հոգիին օգնութեամբ: Ասոր համար ալ՝ արթուն հսկեցէ՛ք, կատարեալ յարատեւութեամբ, և աղօթեցէ՛ք բոլոր հաւատացեալ եղբայրներուն համար: Աղօթեցէ՛ք նաեւ ինծի համար, որպէսզի Աստուած օգնէ ինծի՝ Իր Խօսքը տալով, և կարենամ համար-ձակօրէն պարզել **Աւետարանին ծածուկ խորհուրդը**՝-Եփես. 2. 10-19:

8. Սուտ վարդապետներու ապստամբութիւնը.--

«Իսկ ով որ տարբեր բան կը սորվեցնէ և կարեւորութիւն չի տար մեր Տիրոջ Տիտուս Քրիստոսի ողջամիտ խօսքերուն, ոչ ալ աստուած-պաշտութեան վրայ հիմնուած ուսուցումներուն, այնպիսին հպարտութեամբ կուրցած մըն է, որ ոչինչ գիտէ: Խնդիրներ և վէճեր ստեղծելու հիւանդութիւնը ունի. և ասկէ ծնունդ կ'առնեն՝ նախանձը, հակա-ռակասիրութիւնը, հայհոյութիւնը, չար կասկածները, և անվերջ բախումները՝ միտքով ապականած և ճշմարտութենէն հեռացած մարդոց միջեւ, որոնք **կը կարծեն թէ կրօնքը շահի աղբիւր է:** Այդպիսիներէն հեռո՛ւ կեցիր:

Կրօնքը շահի մեծ աղբիւր է, այո՛, իր ունեցածով գոհանալ գիտցողին համար: Արդարեւ, մեզի հետ որեւէ բան չբերինք աշխարհ, և որեւէ բան պիտի չկարենանք տանիլ մեզի հետ: Եթէ ուտելիք և հագնելիք ունինք՝ անունցմով բաւարարուինք: Իսկ անոնք որ հարստանալ կ'ուզեն՝ փորձու-թեան և թակարդի մէջ կ'իյնան: Կը բռնուին շատ մը անմիտ ու վնասակար ցանկութիւններով, որոնք մարդիկը մահուան և կորուստի անդունդը կը գլորեն: Որովհետեւ բոլոր **չարիքներու արմատը** դրամասիրութիւնն է: Ծատեր դրամ դիզելու ձգտելով՝ հաւատքէն շեղեցան և իրենք զիրենք տանջեցին բազմաթիւ ցաւերով»--Ա. Տիմ. 2. 3-10:

9. Զրլլա՛յ որ մէկը ձեզ խաբէ որեւէ ձեւով: Որովհետեւ Տիրոջ Օրը պիտի չգայ՝ մինչեւ որ նախ չգայ Տիրոջ դէմ վերջին ապստամբութիւնը, և չյայտնուի **անօրէնութեան մարմնացումը եղող մարդը, կորուստի սահմանուած հակառակորդը, որ պիտի ընդդիմանայ աստուած կոչուած և մարդոցմէ պաշտուած որեւէ բանի: Մինչեւ իսկ Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի և ինքզինքին համար պիտի յայտարարէ՝ թէ աստուած է:**

Անշուշտ բազմաթիւ վկայութիւններ եւս կան, սակայն հաւատալ ուզող-ներուն վերեւ յիշուածները բաւարար կը սեպեն:

**Յունիս 12, 2003
Թորոնթօ**